

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՍԱՐԿԱԽԱԳՆԵՐ ԿԸ ՔԱՐՈՋԵՆ

Ուրախ ենք հաղորդելու, թե Արեւմտեան Թեմէն ներս Քահանայութեան Թեկնածու Սարկաւագներ կը շարունակեն ստանալ իրենց կրօնագիտական բարձրագոյն ուսումը եւ միեւնոյն ատեն կը ծառայեն իրենց տեղական եկեղեցիներուն մէջ:

Նկարի ունենալով, որ արձակուրդի շրջանն է, Սրբազան Հայրը առիթ ընծայեց անոնց, որպէսզի քարոզ պատրաստեն եւ փորձառութիւն ձեռք բերելու համար քարոզեն: Կիրակի, Յունիս 7ին Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան քարոզեց Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ Առաջնորդարան, Բրշ. Մէթիու Սրկ. Աշ Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ, իսկ Բրշ. Մկրտիչ Սրկ. Քսաչիքեան Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: